ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-997-16.01.2025-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկություններ և դիտողություններ չունի:

Միաժամանակ հարկ է նկատել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 135.2-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն նախատեսելիս օրենսդիրը տարբերակված մոտեցում է նախատեսել այդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար, այն է՝ տրանսպորտային միջոցներում ծխախոտային արտադրատեսակներ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը, մասնավորապես՝

«1. Տրանսպորտային միջոցի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների) վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով, և տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներում ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ՝ նաև տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:»:

Սույն փոփոխությամբ տուգանային միավորի կիրառման մասով օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը նույնացվում են, ինչը կարծում ենք վերանայման անհրաժեշտություն ունի:

Առաջարկում ենք նաև օրենքի դրույթների համար նախատեսել մեկ միասնական ուժի մեջ մտնելու ժամկետ, մասնավորապես՝ ուժի մեջ մտնելու պահին տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց մինչև օրենքն ուժի մեջ մտնելը հատկացված 9 միավորի փոխարեն հաշվարկել 13 միավոր, իսկ օրենքն ուժի մեջ մտնելու պահին վարելու իրավունքը կասեցված անձանց 13 միավոր հատկացնել կասեցման ժամկետի ավարտին հաջորդող օրը: